

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿՈՉՈՒՄԸ*.

Ամբողջ Եւրոպան պաշտօնապէս ընդունում է Քրիստոսի Աստուած լինելը, ընդունում է, որ Ս. Գիրքը իւր մէջ բովանդակում է Աստուածային Յայտնութիւնը, բացարձակ ճշմարտութիւնը, դորանով ընդունում է նաեւ, որ քրիստոնէական աշխարհահայեացքն է գոյութեան բացարձակ ճշմարտութիւնը, որ քրիստոնէական իդէալն է, ոչ միայն երկրային, այլեւ տիեզերական բարձրագոյն իդէալը, որ քրիստոնէական բարոյականութիւնն է Աստուածային յաւիտենական արդարութեան և բացարձակ ճշմարտութեան հետ համաձայնեցրած կեանքի բուն էութիւնը: Ընդունում է նաեւ, որ պետական և ընտանեկան կեանքի ամբողջ կազմը ըստ կարելոյն պէտք է համաձայն լինի Աստուածային Յայտնութեան, բացարձակ ճշմարտութեան և յաւիտենական արդարութեան հետ:

Մի ամբողջ պետութեան կեանք կարող է բանականորէն համաձայն լինել Աստուածային արդարութեան բացարձակ ճշմարտութեան հետ այն ժամանակ, երբ նորա միլիոնաւոր բնակչութեան մեծամասնութեան կեանքը համաձայն է դորան. իսկ իւրաքանչիւր անհատի կեանք դորան համաձայն կը լինի այն ժամանակ, երբ նա կունենայ պարզ հասկացողութիւն ճշմարտութեան մասին և հոգեւ համապատասխան տրամադրութիւն:

Անկեղծօրէն և գիտակցաբար հաւատացող մարդը չի կարող, բացի «ըստ հաւատոյ» կեանքից, բանական համաբել ուրիշ որևէ կեանք, չի կարող չձգտել համաձայնեցնելու իւր կեանքի ամբողջ ընթացքը յաւիտենական արդարութեան հետ:

Քրիստոնէական դպրոցի սուրբ և անպայման պարտականութիւնն է քրիստոնէական աշխարհահայեացքի,

* Ն. Նեպլիւսի „Что есть истина?“ գրքից:

քրիստոնէական իդէալի և քրիստոնէական բարոյականութեան խիստ սրոշ և միանգամայն պարզ հասկացողութիւն տալ իւր սանիկներին: Նա պարտաւոր է ձգտելու, որ բացարձակ ճշմարտութեան, Աստուածային յաւիտենական արդարութեան գիտակցութիւնը այնպէս արմատանայ սաների մտքում, որ նրանք կարողանան քրիստոնէական մտածողութեան եղանակ և հոգու քրիստոնէական տրամադրութիւն ձեռք բերել:

Աստուծոյ պատկերի նման է ստեղծուած մարդ և նորա յաւիտենական հոգին Աստուծոյ պէս ազատ է: Դպրոցը չի կարող կենդանի հաւատ տալ, հաւատը հետեանք է հոգու ազատ կամեցողութեան և Աստուածային շնորհաց միասնական ներդարծութեան. նա պարտաւոր է պարզ և սրոշ պատասխան տալ «ի՞նչ է ճշմարտութիւնը» և «ի՞նչ է Աստուածային յաւիտենական արդարութիւնը» հարցերին: Եթէ դպրոցը այդ չէ անում, նա քրիստոնէական դպրոց չէ այլևս:

Քրիստոնէական դպրոցը պարտաւոր է իբրև գլուխ գիտութեանց դնել դոյութեան բացարձակ ճշմարտութեան բարձրագոյն գիտութիւնը և ապա նորա հետ ամենայն զգուշութեամբ համաձայնեցնել խաբուսիկ զգայութեանց և բանականութեան փորձերի վերայ հիմնուած գիտութիւնները: Այստեղ ոչ մի զիջողութիւն (կոմպրոմիս) չի կարող: Երկուսից մէկը, կամ դպրոցը պէտք է ընդունէ Աստուածային Յայտնութեան բացարձակ ճշմարտութիւնը կամ միանգամայն հրաժարուի նրանից: Եթէ դպրոցը ընդունում է այդ, պէտք է ընդունէ նաև նրան անհամաձայն բոլոր գիտական ենթադրութիւնների բացարձակ ստութիւնը:

Եթէ դպրոցը այդ չէ անում, եթէ Աստուածային Յայտնութեան բացարձակ ճշմարտութեան հետ զուգընթաց տալիս է իբրև ճշմարտութիւն նրան ուղղակի հակասող գիտական ենթադրութիւններ, եթէ թոյլ է տալիս գործածել փրասակար ուղղութեանն դասագրքեր և ընդունում է իւր մէջ ոչ քրիստոնէական հայեացքի տէր ու-

սուցիչներ, դորանով նա յայտնապէս հրաժարուում է Բրիտանոսին և Աստուածային Յայտնութեան հաւատալուց, աշակերտների մօքում հակաքրիստոնէական հայեացքներ է պատուաստում, կրօնական կեանքի թշնամիներ սնուցանում և անհաւատութեան պրոպագանդայի համար իբրև միսիոնարական մի հաստատութիւն ներկայանում։ Այդպիսով դպրոցը ծաղրում է Աստուածային Յայտնութիւնը՝ տալով իբրև հետեւանք խիստ գիտական հետազոտութեանց այնպիսի ենթադրութիւններ, որոնց ընդունողը չի կարող հաւատալ ոչ միայն բանական հոգու, այլև բանական Աստուծոյ գոյութեանը։

Զպէտք է շփոթել գիտական հետազոտութեանց ազատութիւնը դատաւանդութեան ազատութեան հետ։ Պետութիւնը կարող է լայն ազատութիւն տալ գիտնական անձանց մօլորուելու, որչափ կամենան. բայց նա չի կարող, քրիստոնեայ լինելով, ազատութիւն տալ մօլորեցնելու մատաղ սերնդի այն ներկայացուցիչներին, որոնցից է կախուած երկրի ամբողջ ապագան։ Իրենց լաբորատորիաներում (աշխատանոց) և գրասենեակներում գիտնականները կարող են ստեղծել ամենատարօրինակ ենթադրութիւններ, բայց քրիստոնեայ պետութիւնը չպէտք է թոյլ տայ, որ դրանք դպրոցներում խախտեն կեանքի կրօնական հիմունքները։ Եթէ դպրոցը ուզում է քրիստոնէական լինել, նա պէտք է իւր սաների մօքում և սրտում խիստ կարգ հաստատէ, պէտք է ուղեցոյց լինի բազմազան տպաւորութիւնների և հակասական ենթադրութիւնների միջից բացարձակ ճշմարտութիւնը որոնելու։

Եթէ դպրոցը հաւատը գիտակցական դարձնելուն չի նպաստում և գիտութեանց աւանդումը չի համաձայնեցնում քրիստոնէական ընդհանուր աշխարհահայեացքի հետ, դորանով նա խոստովանում է իւր անհաւատութիւնը կամ զրպարտում Աստուածային Յայտնութիւնը՝ ստիպելով ենթադրել, որ նրա մէջ չի կարելի որոնել ոչ բացարձակ ճշմարտութեան ճանաչողութիւնը և ոչ էլ Աստուածային արդարութեան յաւիտենական ճշմարտութեան

համեմատ բանական և սուրբ կեանք վարելու հասկացողութիւնը։ Ահա այդ է Ս. Հոգու դէմ հայհոյութիւնը և այդ չի ներուել նրանց, ովքեր ունեն երկնային արքայութեան բանալիները՝ իրանք չեն մտնում և մտնել ցանկացողներին արգելում են, այն ինչ քրիստոնէական դպրոցը պէտք է բանալի լինի Աստուածային Յայտնութեան բացարձակ ճշմարտութեան ճանաչողութեան համար, առանց որի քրիստոնէի համար չկայ դրական գիտութիւն, չկայ կեանքի խորհուրդը ըմբռնելու և բանական—քրիստոնէական կեանք վարելու հնարաւորութիւն։

Թէ ինչ է տալիս քրիստոնէական դպրոցը, այդ ես գիտեմ սեփական փորձով։ Ծնուած լինելով քրիստոնեայ Ռուսաստանում, անցնելով քրիստոնէական գիմնադիտնի և համալսարանի դասընթացը և կամենալով համաձայնեցնել իմ կեանքը քրիստոնէական համոզմունքներին հետ, երբ հարց տուի ինքս ինձ՝ թէ ի՞նչպէս պէտք է ապրել, տեսայ, որ դպրոցը չի տուել ինձ այն, ինչ որ ամենից անհրաժեշտն է։ Նա չէր տուել ինձ մի ամբողջական քրիստոնէական աշխարհահայեացք, քրիստոնէական իդէալի պարզ հասկացողութիւն, քրիստոնէական բարոյականութեան կազմակերպուած սիստեմ, դպրոցը չէր տուել ինձ Քրիստոսի սուրբ վարդապետութեան բացարձակ ճշմարտութեան ճանաչողութիւնը, նա չէր հասկացրել ինձ իմ քրիստոնէական պարտականութիւնները դէպի Աստուած, դէպի մերձաւորը և դէպի իմ անձը։

Անցնելով գիմնադիտնի դասընթացը, ես գիտէի մի քանի դէպքեր Հին Կտակարանի նահապետների կեանքից, առանց որեւէ բացատրութեան նրանց օրինակի մեզ համար ունեցած մեծ նշանակութեան մասին, գիտէի նրանց տարիքի ճիշտ թիւը, Նոյի տապանի մեծութեան չափը, գիտէի մի քանի հրաշալի դէպքեր մարգարէների կեանքից, բայց ոչ մի ակնարկ դէժ ամենանշանաւոր մարգարէների գրքերի մասին, ոչ մի խօսք այն բուռն ոգեւորութեամբ լի էջերից, որ գրել են հոգեւոր ասպարիզի վերայ փայլող այն վիթխարի հսկաները՝ Եսայի, Երեմիա, Եղե-

կիէլ: Դիտէի Դաւիթ արքայի թուլութեանց և Սողոմոն
 թագաւորի իմաստութեան մասին, բայց ոչ սաղմոսների
 ներքին, խոր, վեհ ոգին էին ինձ մատչելի դարձրել և ոչ
 Սողոմոնի գրքերի մէջ եղած անսպառ իմասնութիւնները
 պարզել: Դիտէի Յիսուսի կեանքի բոլոր գէպերը, բայց
 որոշ հասկացողութիւն չունէի լերան քարոզի, Յովհաննու
 աւետարանի վերջին գլուխների, առաքելոց թղթերի բո-
 վանդակութեան՝ նոցա պարունակած անդին գանձերի
 մասին:

Ոչ, ժամանակակից քրիստոնէական դպրոցը չի տալիս
 կենդանի Աստուծոյ կամքի ճանաչողութիւն, նոյն խաչ հաս-
 կացողութիւն չի տալիս թէ ինչպէս պէտք է ապրել ըստ
 հաւատոյ և բարիք գործել, պատասխան չի տալիս ինչ է
 ճշմարտութիւնը և ինչպէս պէտք է ապրել հիմնական—
 կենսական հարցերին:

Մամբրէ վարդապետ

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅՈՒՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՅԻ

Ռուսաց «Եկեղ. համըսւարներ» շաբաթաթերթի մէջ Քորէա-
 յից տպուած մի թղթակցութիւն մանրամասնօրէն նկարագրում
 է Ռուսաց առաքելական գործի զբաղթիւնը ծայրագոյն արեւել-
 քում: Թղթակիցը ցաւ է յայտնում այն ըանի համար, որ ռու-
 սաց պետութիւնը կարեւոր ուշադրութիւն չի դարձնում առա-
 քելական գործի վրայ և չի տալիս պահանջուած նիւթական
 ապահովութիւնը. այն ինչ քաղաքական այս կամ այն նպատա-
 կի իրագործման համար ահադին դումարներ են ծախսուում:
 Չնայելով առաքելութեան նիւթական սուղ միջոցներին, ըստ
 թղթակցի վկայութեան, նա կարողանում է մեծամեծ յաջողու-